

ሀ ጣ ኮ ስ ሀ. 4 .ጃ ሀ. ሶ ጥ ር

ստանալագրութեք

ՀԱՅԿ. ԿԵԱՆՔ

ՀԱՅԱՍՏԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԻԼԵՑԻԱՅԻ
ՏԱՍՆԱՄԵԱԿԸ

Հայաստանի մէջ տօնուած է քաղաքացիական զորաց հաստատման տօնաւորման 10-ամեակը: Այս առթիւ քաղաքական զօրքերը զօրանցք մը կատարած են Երեւանի մէջ: Ատոնց պետն է Ս. Սալաւոսեան: 1920 ին միլիոնները կտանան եղբ 35 բուրձի քվարձք. ներկայիս կ'ստանան 50-100 բուրձի բացի զգնատուութեանէ և ձիասարքէ որ կանոնաւոր վիճակի է մէջ կը գտնուի: Հայաստանի քաղաքացիական զօրքին յանձնուած է ոչ միայն ուժ բազորմանը և հետապնդութիւնը, այլ նաև արդիւնաբերական և տնտեսական հիմնարկութիւններուն պահպանումը:

ԴԷՊԻ ՀԱՅԱՍՏԱՆ

Հայաստանէն եկած մասնաւոր նամակէ մը հանդիպող կը տեղեկանք որ 1931 տարւոյ ընթացքին, Հայ կառավարութեան ծախքով Սուրիան լին բաւական թուով գաղթականներ Հայաստան պիտի փոխադրուին:

ԵՐԿՐԱՆՈՒԹ

Լէնինականի մէջ դարձեալ երկրաշարժ պատահեցաւ: «Լե. Հայաստան» կ'ըսէ թէ ցնցումները բաւական ուժեղ էին: Վերանայեցին զին յայտնի չեն:

ԱՆՈՒՇԱՆՈՑ ԲՈՅՈՒՆ

Հայաստան ունի բազմաթիւ անուշանոց բոյսեր: Բուսական Պրն. Սեպեմբերէն գտած է երկու բոյսեր, որոնք նորութիւններ են ամբողջ Արեւմտեան երկրներէն համար: Մէկը կը կոչուի Երեւանի Օշին-տըր, իսկ միւսը, Եղիսպակ Օձազը-լուս որ կարմիր ծաղիկներով գեղեցիկ թուփ մըն է:

ԹՈՒՐԻՔԻԱ

ԱՐԱՐԿԻՐԻ ՀԱՅԵՐԸ

Վերջերս Արաբկիրէն Հայկա հասած Տէր Գուրգէն քահանայ Հաճախեալ, շատ տխուր գոյնիւրով կը ներկայացնէ հոն տիրող կացութիւնը:

Թուրք կառավարութիւնը, կ'ըսէ, ուղղակի թէ անուղղակի բռնադատութիւններ կ'աւելցնէ, Հայեր, գիւղերը չեն կրնար երթալ գալ, գիւղերային յարաբերութիւններ տեղի կուտան տուններու վրայ, յաճախեալ բռնադատութիւններ և խռովանքներ, ինչպէս նաև փողոցներու մէջ ամենօրեայ անպատուներ, ծեծեր եւայլն:

Այս ամենուն հանդէպ ժողովուրդը սահմուկած է, իրենց միակ յոյսը և ակնկալութիւնը ըլլալով կարելի եղածին չափ շուտով Նոր Արաբկիր փոխադրուիլ:

ԳՆԷԼ ԵՊԻՍԿ. ԳԱՆԵՄԵՐԵԱՆ ՎԱՆՃԱՆԱՍ

Պոստայն թերթերը կը գուժեն մահը Գեոր. Տ. Գնէլ Եպիսկ. Գալեմ-բերանի:

Հանդուցեալը իբր առաջնորդ երկրորդ տարիներ պաշտօնավարած է Մուշի, Սեբաստիոյ և Սամսոնի մէջ:

ԵՐԿՐԱՆ

ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԲՈՒՄԱՆՈՅ ՄԷՋ

Հ. Բ. Ը. Միւլթեան Ֆիլիպի Մանանդեւը Որբերու Օրուան համար 8489 լէվա հաւաքուած է ուրուն վրայ թաղական խորհուրդը իր կողմէ ևս 1000 լէվա աւելցնելով, համազումարէ եղած է 9489 լէվա:

ԱՄԵՐԻԿԱ

ՓՈՔԻԿ ՀԱՅՈՒՇԻ ՄԸ ԳՆԱՀԱՏՈՒՄՍ

Բալիֆօրնիոյ Փալո Ալիօ քաղաքին մէջ տրուած դաշնակի նուազահանդէսին մասնակցած է նաև հայ աղջնակ մը, 8 տարեկան Շարլոթ Ալաման, 18 աշակերտներու հետ հաճախեալ մրցակցութեամբ:

ՏԵՂ. ԼՈՒՐԵՐ

Հապիպ Թահայի կարեւոր յայտնութիւնը

Մահուան դատաւարուած Հապիպ Թահան, իբրեւ թէ կառավարութեան յայտնած է թէ՛ եթէ իրեն կեանքը չնորհն, պատրաստ է յայտնելու Մէտավարին բուն սպաննիչին անունը:

Առեւտրական Յարաբերութիւն Թուրքիոյ հետ

Պոլսոյ առեւտրական սենեակը խնդրած է իր կառավարութենէն որ հովանաւորեալ երկիրներու հետ առեւտրական համաձայնագիր կնքելու համար, բանակցութեանց սկսի Բ. Գոմիսէրութեան հետ:

Հայ համայնավարներ Զանգի Մ է չ

Զանգի ոստիկանութիւնը որպէս համայնավար, ձերբակալած եւ Պէյրութ դրկած է չորս հայեր, Պետրոս և Տիգրան Թէրզեան, Սիսակ և Մկրտիչ Բըրըքեան:

Նոր Վիճակագրութիւն

Ըստ վերջին վիճակագրութեան հովանաւորութեան ներքեւ գտնուող երկրներուն տարածութիւնն ու բնակչութիւնը հետեւեալներն են:

Լիբանան՝ 10,500: Սուրիոյ՝ 27000
Ալաւիթ՝ 6500 ձէպէլ Տրուզ 6,600
Քառակուսի քիլոմէթր:
Բնակչութիւն. Լիբանան՝ 805,000
Սուրիոյ՝ 1,620,009, Ալաւիթ՝ 283,000, ձէպէլ Տրուզ՝ 60,000:

Համայնավարներ Պէյրութի մէջ

Փիլիպպոս Պահլավանեան անուն հայ մը, ներկայանալով Նահիբ Ռատի կանութեան կը յայտնէ թէ անձանթ մը համայնավար թուրքի մը տուած է իր եղբորը՝ Յակոբ Պահլավանեանին, և թէ այդ անձանթ անձը այժմ կը գտնուի այսինչ սափ-րիչին խանութը:

Բոմիսէր Ժօզէֆ Ալատ անմիջապէս որոշեալ վայրը երթալով կը ձերբակալէ թէ անձանթ եղող անձը և թէ սափրիչը: Եւ կը հրամայէ որ իրեն հետեին, խուզարկութիւններ կատարելու համար իրենց տուններուն մէջ:

Արգարե, անոնցմէ միոյն բնակարանին մէջ երեւան կը հանուի անապիս քանակութեամբ թուրքիկներ մուրճ և մանգաղ զլխաբուրճիս, ինչպէս նաև համայնավար խորհրդուն զանազան լուսանկարներ:

ՎԱՂԱՍԵՈՒԿ

ՈՒՋԱՄԻԿԻՆ

Ռէհան նորածնի տունի բուրուճիս:

Անգուլթ մանգաղը խլից քեզ յաւէտ: Զիարդ խամբեցար չը բացած ծաղկունք:

Մեր սրտերուն մէջ թողով վիշտ խորունկ:

Ինչո՞ւ, ո՞չ, ինչու մահ անագորոյն, Կուգեա միշտ հնձիլ կեանքերը դաւուն:

Պէյրութ ՊէՏԵՐՄԻՆ

Փ Ն Տ Ո Ւ Յ Յ Ի Ք

Դիւրութիւն մը ընկելու համար քերթիս յարգելի համակիրներուն, որոնք եմ յետ այսու «Լիբանան»ը Արաբ հաւաքականներու միջոցաւ ալ ծախել ալ:

Փնտնեցի ամէն տեղ

իր նմանը չ'ունեցող

“Ք Ի Ի Բ Ե Ր”,

Զուտ Գերմանական գաղտնուր

Սուրիոյ և Լիբանանի

Միակ ներկայացուցիչ՝

Մ. ՏԱՄԱՏԵԱՆ

10 Սուր - Սուրսօք

Պէյրութ

Ներ:

Հարցաքննութեան միջոցին սափրիչը կը խոստովանի թէ՛ համայնավարութեամբ ամբաստանուած եւ բռնադատուած Արթիւր Սալոգեանը և Միհրան Կարապետ Լիզեանը իր կողմէ պաշտօն ստանձնած էին թուրքիկներ փակցնելու համար:

Գիշերը նման թուրքիկ մըն ալ տեսնուած է Քէմփի Հայոց եկեղեցիի պատին փակցուած և վար առնուած է պահակներու կողմէ:

Անգործութիւնը

Կը լսենք որ Ռատ. Տիգրէնութեան մէջ վեց նոր պաշտօնեաներու ընտրութեան համար տեղի ունենալիք մրցումն 750 թեկնածուներ ներկայացած են:

Նմանապէս 11 Ս. Ոսկի. Թօշակով գիշերապահի պաշտօնին համար հազարաւոր խնդրագիրներ մատուցուած են:

= 96 =

Թերուն:

Ձեր վարկածը ինձի պատահական կը թուի, յայտարարեց ոստիկանութեան պետը:

Նախ և առաջ, ըստ ձեր տեղեկագիրներէն մէկուն, զոր աչքիս առջեւ ունիմ Պէյֆէկօրի արձանը, որ անցեալ դարուն վերջերը Թիւրք-Մարթիէն առաքելութեան կողմէ Պաղեստինի մէջ կատարուած պեղումներէն եկած է. մօտաւորապէս երեսուն տարիներէ ի վեր Լուվրի կը պատկանի:

Մէնարտիէ առարկեց:

— Կասկածելի Արեւելեցիները հետապնդելու միջոցին, տեղեկացայ թէ այս երկրին մէջ մեծ թիւով գաղտնի ընկերակցութիւններ գոյութիւն ունին, որոնք գրեթէ ամէն տեղ ճիւղաւորուածներ ունին:

— Դիտենք ստիկա:

— Հետեւեալ ասկէ կ'եզրակացնեմ թէ, ըսաւ ոստիկանական քննիչը, Պէյֆէկօրի արձանը արգեօք իբր թաքստոց չի կրնար ծառայած ըլլալ այդ բազմաթիւ աղանդներէն միոյն, որ այս վայրկեանիս որոշած ըլլալ վերստանալու թուրքերը՝ որոնք հոն տեղաւորած էր:

— Սիրելի Մէնարտիէ, այդ ձեր երեւակայութիւնները կրնան Բիէն Պէնուայի համար վէպի նիւթ մը ըլլալ:

Գուր իսկ հաստատեցիք թէ Պէյֆէկօրի արձանը միաձոյլ քարի զանգուած մըն էր:

— Ճշմարիտ է, խոստովանեցաւ ոստիկանը, բայց խորհեցայ թէ կրնար գաղտնի մեքենակաւորութիւն մը բովանդակել:

— Ձեմ կարծեմ, կը ճանչնամ ձեր ճարպիկութիւնը և խորամանկութիւնը, եթէ տառնիք բան մը

ԵՆԵՑԷՔ ՄԻԿԱՐԷԹ ՄԱԹՈՍԵԱՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Ռուսմանիա Ռուսիոյ կը մօտենայ

«Ավալ» գործակալութեան տեղեկութեանց նամաձայն, Ռուսմանիոյ կառավարութիւնը Թուրքիոյ արաբիք գործավար Թէվ-ճիլ Բիւսիւ պէյէ խնդրած է որ ռուսիոյ մէջ բարեկամական դաշինքի մը կնքումին համար միջնորդէ: Թէվճիլ Բիւսիւ պէյ իր բարեկամական միջնորդութիւնը խոստացած է:

Կարելու խնդիրներ

Ազգ. Դաւանակցութեան առջեւ

Թերթեր մեծ կարեւորութիւն կուտան Պրիւս-Հէնսթրըն տեսակցութեան, որ տեղի պիտի ունենայ Ժընէվի մէջ: Ազգ. Դաւանակցութեան այս նիստին Անգլիա մեծ դեր պիտի խաղայ:

«Մաթէն»ի համաձայն, երկու նախարարներ մասնաւորաբար պիտի տեսակցին գերմանիէն վէնի մասին: Ազգ. Դաւանակցութիւնը, կ'ըսեն անոնք, պէտք է որ բոլոր ալ Պրիւսիի եւ Վաւալիոյ ներկայացուցիչներուն ազատեմ բացառել իրենց տեսակցութեան, առանց սակայն փոքրամասնութեանց դաւանակցութեան սահմանէն դուրս ելլելու:

Երկու նախարարներ պիտի ֆնեն Ժընէվի քաղաք, նաւալին բանակցութիւններու ներկայ վիճակը:

Սուրիան պիտի բաժնեն

Թուրքերն ու Իտալացիները

«Տէլի Գրոնիլ» եւ «Տէլի Նիուզ» անգլիական թերթերէն փաղելով, «Էլ Նիսա» թերթը կը հաղորդէ որ իտալացիներու եւ թուրքերու միջեւ գաղտնի համաձայնութիւն մը կնքուած է: Սուրիան իրենց մէջ բաժնելու համար:

«Էլ Նիսա» նոյնութեամբ կը քաղաքանի «Տէլի Նիուզ»ի հետեւեալ հետագիրը:

«Իտալիա եւ Թուրքիա գաղտնի համաձայնութիւն մը կնքած են, որուն համաձայն երկ Ժընէվի քաղաքին պատկանի քաղաքները, անոնք իրենց մէջ պիտի բաժնեն Սուրիան»:

Վերջը «Էլ Նիսա» դիտել կուտայ որ իր նախատեսութիւնները այդ մասին սկսած են իրականացալ. որովհետեւ իմ ասկէ առաջ երեք խմբագրականներով շեշտած էր նման վստահի մը պարագային Սուրիոյ ներաւկուելի կացութիւնը:

Գերմանական Կայսրութեան տարեդարձը

Գերմանական կայսրութեան 60-րդ տարեդարձը մեծ շուքով տօնուցաւ Գերմանիոյ ամէն կողմը, Մարեալ Հիմեմպուրկ նախագահեց այդ առթիւ տեղի ունեցած բազմաթիւ հանգիստութեանց:

= 93 =

Շանթըքօք իր և ողջկանը դէմ ուղղուած այս նոր մահափորձէն զգացած իր յուզումը պարտկելով ըսաւ:

— Ստահակը լաւ նիւթած է իր ծրագիրը... օ՜ ձիքը ձեզմէ ազատած ըլլալէ վերջ միտքը դրած է մեզ ալ մէջտեղէն վերցնել, Գոյէթը և զիս... և ձեզ կ'ամբաստանէ այս նոր ոճով... բարեբաղդաբար ճողպարած էք իր մեղսակիցներէն... որովհետեւ եթէ հոս եղած չըլլալիք, բոլորովին ստոյգ է որ մեր վերջին ժամը հասած պիտի ըլլալ:

Յանկարծ, իր գուարթութիւնը վերագտնելով գաղտնի ոստիկանը աւելցուց:

— Աւելի լաւ պիտի ըլլայ որ վերստին ճոխ սեղանի մը շուրջը գտնուինք այս զիշեր, քան թէ միւս աշխարհին մէջ, նոյն իսկ զբախտին լմէջ...

Յետոյ խօսքը ուղղելով Պէյկարտի

— Շատ լաւ, ինչ որոշեցիք:

— Իրաւունք ունիք, պէտք է անյայտանամ:

— Ուրեմն կը մնաք:

— Սյո, կը մնամ:

ՎԱԼՈՒՍՆԵՐՈՒ ԳԱՆՁԸ

Ոստիկան Մէնարտիէն, հակառակ իր ցոյց տուած բոլոր կարողութեանը, չարունակ կը մաքառեր խիստ խորհրդաւոր գաղտնիքի մը աղջկամուղջիւրուն մէջ:

Մեծ թանգարանին ներքնակողմը կատարել տուած պեղումները ու հետազոտութիւնները ունէ արեւելքէն չէին տուած:

Մինչև այն առին զանաւոր հետքերուն յուսանկարներէն ոչ մէկը չէին համապատասխանէր սոս

